

յակնարկութենէ³ քումմէ՝ առնել ի տեղւոջս յայսմիկ, յորում⁴ հիմն հաւատոյս մերոյ⁵ խարսխեալ մնասցէ⁶ անդրդուելի մինչեւ ի վերջին աւուրն⁷, յորժամ գաս⁸ եւ նորոգես զսա անապական. դո՛ւ, Տէ՛ր. եւ⁹ միջնորդ է սա¹⁰ ստուերի եւ ճշմարտութեան եւ դարձեալ նստելոց է ընդ¹¹ աջմէ միածնի¹² քո ի փառս անճառելիս¹³. դո՛ւ¹⁴, Տէ՛ր զաւրութեանց¹⁵, հայեա՛ց յերկնից ի պատրաստ բնակութենէ¹⁶ քումմէ եւ յայտնեա՛ մեզ գտեղի¹⁷ բնակութեան սուրբ առաքելոցս, զի լիցի տաճար փառաց¹⁸ քոց ի¹⁹ յերկրիս²⁰ յայսմիկ ի գովութիւն մեծի տէրութեանդ²¹ եւ²² ի պատիւ աստուածութեան քո եւ ի փառս²³ Ամենասուրբ Երրորդութեանդ այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից²⁴»:

70²⁵ Եւ իբրեւ կատարեաց²⁶ զաղաթն²⁷, յայտնեցաւ առ²⁸ նմա հրեշտակ²⁹ Տեառն եւ ասէ. «Յարուցեալ երթիցես ի ստորոտ լերինն Տաւրոսի³⁰, եւ ցուցից քեզ տեղի, ուր հաճեցաւ Տէր բնակել³¹ սրբոցդ³²»: 71 Եւ նորա խնդութեամբ արտաքս ելեալ³³ Էառ³⁴ զնշխարս սրբոց առաքելոցն եւ զնաց ի նոյն տեղի, ուր³⁵ եցոյց նմա հրեշտակն³⁶

1 *h* յառաջին

2 *sv* հիմնարկութիւնն

3 / յակնարկութենէ տեղիս / *ho* յակնարկութենէ *փիս* յակնարկութենէ (*msv*)

4 *h* որ, *mv* յոր *փիս* յորում (*so*) / / *չիք* յորում

5 *h* մեր *փիս* մերոյ / / *չիք* մերոյ

6 *o* մնաց *փիս* մնացէ

7 *h* աւր, *msv* աւրն *փիս* աւուրն (*lo*)

8 / յորում գաս դու *փիս* յորժամ գաս

9 *ho* որ եղեւ *փիս* դու Տէր եւ (*msv*)

10 *o* *չիք* է սա

11 *m* սա ընդ

12 *ov* միածնիդ

13 / *չիք* դու Տէր ... անճառելիս (3 տող)

14 / դու եւ այժմ

15 / *չիք* զաւրութեանց

16 *o* բնակութենէդ

17 *hmsov* տեղի *փիս* մեզ գտեղի (*l*)

18 *hmsov* նշխարաց սրբոց առաքելոցն (*ho* առաքելոց) *փիս* սուրբ առաքելոցս ... փառաց (*l*)

19 / եւ ի / *mo* *չիք* ի

20 *m* յերկրիս

21 / մեծութեան քոյ *փիս* մեծի տէրութեանդ

22 *ho* *չիք* եւ

23 *ho* *չիք* աստուածութեան քո եւ ի փառս

24 *sv* *չիք* այժմ եւ ... յաւիտենից / *hm* ամէն *փիս* այժմ եւ ... յաւիտենից

25 Այստեղ *p ունի գլուխ*՝ Յայտնել հրեշտակի Տեառն սրբոյն Գրիգորի տեղի նշխարացն ամփոփման

26 / կատարեալ *փիս* իբրեւ կատարեաց

27 *h* զաղօթս

28 *m* *չիք* առ

29 *s* հրեշտակապետն *փիս* հրեշտակ

30 *m* Տորոսի

31 *o* բնակեալ

32 *h* սրբոցդ բնակել *փիս* բնակել սրբոցդ / / *չիք* բնակել սրբոցդ

33 / ելեալ արտաքս *փիս* արտաքս ելեալ / *s* եկեալ *փիս* ելեալ

34 / առ *փիս* Էառ

35 / տեղին, զոր *փիս* նոյն տեղի ուր

36 *hv* հրեշտակ / *s* հրեշտակապետն